ԲԾԱՎՈՐ ԳՈՀՈՒԹՅՈՒՆ

Տղամարդը նման չէր մուրացկանի, թեեւ զբաղմունքն ըստ էության մուրացկանություն էր՝ այս ու այն դռները բախելով, հաց էր խնդրում: Եվ տարիքն էլ մեծ չէր: Թավ, ճերմակած հոնքերի տակից աչքերը դեռեւս փայլ ունեին, որ երբեմն-երբեմն չսափրած դեմքի միջից կայծկլտում էին: Նման պահերին նույնիսկ ձայնի մեջ մետաղ էր զրնգում, կարծես հավաստելով, որ դրա տերը երբեւէ ինքնավստահ մարդ է եղել: Նրա դժվար ապրելակերպի ամենաստույգ նշանը, թերեւս, հագուստն էր: Ոչ թե այն պատճառով, որ շորերը շատ հին էին եւ անճաշակորեն իրար վրայից հագնված, այլ որ տարագույն կեղտոտ էին: Սպիաձեւ կարկատած սվիտերի տակից վերնաշապիկի աջ օձիքը լեզուն դուրս էր հանել, եւ վրայի կեղտը մատնում էր մարմնի անմաքրությունը:

Տղամարդը փալասից կարված մեծ պայուսակը կռնատակին, ամեն օրվա պես հացի էր ելել: Հացը հարաբերական մթերք է. ինչ էլ տային, պիտի մտներ այդ հասկացության տակ, միայն թե ուտելու համար պիտանի լիներ:

Աղբանոցները պտռելու սովորություն չուներ, դա շների զբաղմունքն է: Իսկ ահա տնետուն ման գալով, մի բան ճարում էր: Լինում են, իհարկե, նաեւ մերժողներ, որոնցից սովորաբար չէր նեղանում: Բուռը բաց մարդկանց, սակայն, երկար-բարակ չի օրհնում, հրամցվածն ընդունում էր, քրթմնջում՝ ապրե՞ս:

Շենք առ շենք ուշադիր նայելով, որպեսզի այցելած բնակարանները չկրկնվեն, դանդաղաքայլ գնում էր: Գաղթականներին սովորաբար չեն ճանաչում, ավելի ճիշտ, չեն ուզում ճանաչել: Ամեն անգամ նոր շենք մտնելով, եկվոր լինելն անպայման ընդգծում էր, մերթ՝ ոչ տեղական բարբառով, մերթ՝ անծանոթին բնորոշ ամաչկոտությամբ, մերթ էլ գաղթականի պահանջադրությամբ: Եւ այդ բոլոր դրսեւորումները տանտերերի մոտ հեշտությամբ անցնում էին:

Հերթական հինգհարկանին երեւի պատերին կպած մագնիս ուներ՝ ձգեց, քաշեց նրան շքամուտքից ներս: Արդեն սովորել էր բնակարանների դռներից ու վրայի ազգանուններից, քիչ սխալվելու հավանականությամբ, զուշակել տանտիրոջ գթասրտությունը: Առաջին հարկի աջակողմյան շքեղ դուռը նրան վանեց՝ շեղ բռնակն ասես իրեն հառված քմծիծաղ լիներ: Նույնիսկ առարկայորեն զգաց դրա տիրոջ հարուստ շունչն ու արագ բարձրացավ երրորդ հարկ: Դիմահայաց դուռը բարի-դեղնագույն ժպտաց: Բայց առավել ուշագրավը վրայի ազգանունն էր, իր ազգանվան նման բաղաձայնաշատ՝ Շահգելդյան: Ի տարբերություն հարկաբաժնի մյուս դռների, այս մեկը դիտանցք չուներ: Չփնտրելով՝ չգտավ զանգն ու ցուցամատի կեռով բախեց դուռը: Կանխազգացողությամբ՝ լավ նվիրատվություն էր ակնկալում, միայն թե դուռը բացողը տանտիրուհին լիներ:

Փականը չրխկաց ու դուռը բացողն ավելի շուտ ազապ աղջկա էր նման, թեպետ սիրունատես աղջիկներն այդ տարիքում արդեն ամուսնացած են լինում: Աղջիկ-

տանտիրուհին երկարափեշ զոլավոր խալաթ էր հագել, որ կիպ գրկել էր նրա սլացիկ մարմինը: Դռան մեջ կանգնածն ավելի շուտ գեղեցիկ հովազ էր՝ զոլավոր խայտանքների մեջ: Տղամարդն այդ բծավոր գեղեցկությունից փոքր-ինչ շփոթված, հետ քաշվեց: Բայց հովազի աչքերը բարի էին եւ հոգնածորեն հանգիստ: Մեղմ, մանկաձայն հարցրեց.

-Ո՞ւմ եք ուզում:

Տղամարդը նայեց նրա աչքերին եւ հոգոց հանեց: Արտաբերվող բառերը սովորականի նման պիտի հնչեին՝ հաց տվեք: Սակայն բառերը դուրս չեկան բերանից:

- Ո՞ւմ եք ուզում,- մանկաձայնը կրկնեց առանց ներքին լարումի ու չարության,- գուցե հասցեն շփոթե՞լ եք: Ձեզ ո՞վ է պետք:

Տղամարդն այդ գեղեցիկ բարությունից ավելի շփոթվեց ու շրջվեց, որ գնա: Չէր ուզում գնալ, ոտքերն ուղղակի կաշկանդվել էին անվճռականությունից:

Եվ մանկաձայնը հասկանալով, ժպտաց.

-Դուք երեւի բան էիք ուզում խնդրել, ասեք, մի ամաչեք,-նա դուռը կրնկի վրա բացեց,- մտեք տուն:

Մանկաձայնն ուղղվեց դեպի խոհանոց, ձեռքով նշան անելով հետեւել իրեն: Տղամարդը հմայվածի պես գնաց նրա հետեւից, նստեց իրեն առաջարկված աթոռին:

-Սովա՞ծ եք երեւի,- հոգատար տրված հարցի հետ արդեն սեղան էր գցում: Նրա վետվետող զոլավոր մեջքը տղամարդու աչքերի առջեւ հին, մոռացված տաք երազի պատրանք էր գծում: Տղամարդը հայացքը շուռ տվեց՝ խոհանոցի մաքուր շքեղության մեջ լայն նայելով:

Հովազը բարակ մեջքը սլացիկ ուղղելով, ժպտաց.

-Հաց կերեք, ես ձեզ չեմ խանգարի,- ու գնաց, իր հետ հանգստություն տանելով:

Տղամարդը քաղցած էր եւ վաղուց այդպիսի ճոխություն չէր ըմբոշխնել: Կերավ մեծ պատառներով ու արագ ծամելով: Պակասողը օղին էր, բայց տանտիրուհի-աղջիկը մոռացել էր խմիչք դնել: Տղամարդը մտովի փորձեց նաեւ սպիրտահեղուկի այրող հոսքը կերակրափողով. ստամոքսը հաճելի տաքացավ այդ զգացողությունից, ու տրամադրությունը բարձրացավ: Կուշտ բխկացրեց եւ ձեռքը տարավ գրպանը՝ ծխախոտ հանելու: Բայց նայեց խոհանոցի բուրումնավետ շքեղությանն ու ձեռքը վարանումով հետ քաշեց՝ դրսում կծխի: Նա բռան մեջ մի քանի անգամ մանր հազաց՝ տանտիրուհի-աղջկան ավետելու իր խնջույքի ավարտը: Հետո, ձեռնափերը ծնկներին, համբերությամբ սկսեց սպասել:

Այսպիսի ընդունելության առաջին անգամ էր արժանանում: Երեւի ազգանունները համընկնելուց էր՝ Շահգելդյան: Շահական, պատվական ազգանուն: Տեսնես տանտերն

ով է: Հազվադեպ հանդիպող ազգանուն է, ի՜նչ իմանաս, մեկ էլ տեսար իրենց կողմերից դուրս եկավ: Եվ երբ հովազը կրկին վետվետաց խոհանոցում, արդեն կուշտ ու մետաղաձայն հարցրեց՝ որտեղացի՞ են ձերոնք:

-Տեղացի՛,- մանկաձայն, պատրաստակամ տանտիրուհի¬աղջիկը մուրաբայով թեյ լցրեց տղամարդու համար,- թեյ խմեք:

Ու կողքի աթոռին նստելով, սկսեց ճրթացնելով ծամոն ծամել:

-Գաղթակա՞ն եք,- հարցրեց, ճրթոցի միջից անհոգ զննելով:

-Հա: Անգործ եմ մնացել: Տան միակ կերակրողը ես եմ:

Տանտիրուհի-աղջիկը խալաթի գրպանից, ասես հովազի երախից, մի թղթադրամ հանեց, մեկնեց նրան:

-Տան համար ուտելիք կառնեք:

- Ապրե՛ս,- ասաց, դրամն ընդունելով հանգիստ,- մենք կա՞րող է նույնիսկ բարեկամ ենք: Ես էլ եմ Շահգելդյան:

Տանտիրուհի-աղջիկը չարձագանքեց, բայց ուշադիր նայեց նրա շորերի կեղտոտությանը:

Տղամարդը թեյի դատարկ բաժակը դրեց սեղանին, ապա հազալով, շրթունքները թեւքով սրբեց:

-Հին շորեր չունե՞ք,- հարցրեց:

-Ո՞ւմ համար:

-Ինձ համար:

-Հայրս մարմնով ավելի հաղթանդամ է: Եթե չափսերը մեծ լինեն, ոչի՞նչ:

-Ոչի՜նչ:

Տանտիրուհի-աղջիկը գնաց ու քիչ հետո վերադառնալով, մի կապոց հին շորեր բերեց՝ պիջակ, շալվար, վերնաշապիկներ, լրիվ չգունաթափված զամշե կուրտկա:

-Սրանք հարմա՞ր են:

Տղամարդը պատասխանելու փոխարեն ձեռքի պայուսակը բացեց ու շորերը արագ-արագ խոթեց մեջը: Հետո գրպանից սինթետիկ քող հանելով, պինդ կապեց պայուսակի փալասե բռնակները:

-Ապրե՛ս:

Տանտիրուհի-աղջիկը նայեց տղամարդու կարկատած կոշիկներին, կարճ պահ երկմտեց ու գնաց մի զույգ համարյա նոր ճտքակոշիկներ էլ բերեց:

- Մի քիչ չափսերով մեծ են, բայց ոչինչ, պետք կգան, վերցրեք:

Տղամարդը դարձյալ անխոս ընդունեց նվերը եւ գրպանից ցելոֆանե մեծ տոպրակ հանելով, ճտքակոշիկները մտցրեց տոպրակի մեջ: Դեմքը մազափայլ շողում էր, իսկ գոհության ժպիտը շուրթերից կախվել, չէր ուզում պոկվել:

-Աղջի՞կ ես,- գիտակի ժեստով կողքանց նայելով, հանկարծ հարցրեց:

-Ի՞նչ:

-Ազա՞պ ես:

-Հա:

-Քանի՞ տարեկան ես:

-Ասենք թե՝ քսանութ...

- Շատ չէ,- տղամարդը խորամանակ-իմաստուն ժպտաց,-տղաս ընդամենը երկու տարով է փոքր քեզանից: Կուզե՞ս ծանոթացնեմ հետը՝ խելոք, բարեսիրտ տղա է: Իրար կսազեք:

Տանտիրուհի-աղջիկը փռթկաց ու ծամոնը քիչ մնաց բերանից դուրս թռչեր:

- Հենց այսօր էլ կարող եմ ծանոթացնել,- համառեց տղմարդը,- ափսոս ես, ախր: Հո՞ ամբողջ կյանքում տանը չես մնալու:

Հեռախոսը զնգաց, ու հովազը զոլավոր խայտալով դուրս սահեց խոհանոցից: Երկար ժամանակ մանկաձայն կարկաչում էր հեռախոսով՝ մերթ ընդ մերթ բարձր ծիծաղելով: Իսկ երբ ետ եկավ, դեմքն անհամեմատ լուրջ էր: Հետաքրքրասերի հայացքով նայեց, եւ տղամարդու համար միանգամայն անսպասելի՝սառը ասաց.

-Հայրս ուր որ է, կգա: Նա մի քիչ բարկացկոտ մարդ է, և եթե ձեզ այստեղ տեսնի, ինձ վրա կջղայնանա:

-Չեմ թողնի,- իր վրա վստահ՝ հոխորտաց,- ինչի՞ պիտի քեզ նման աղջկա վրա ջղայնանա,- բայց տղամարդն իրոք զգաց, որ գնալու ժամանակն է: Վեր կացավ, պայուսակն ու տոպրակը ձախ ձեռքով վերցրեց, աջով, չգիտես ինչու, գրպանից հանեց լուցկին եւ մատների մեջ պահած՝ հարցրեց: - Հը, ծանոթացնե՞մ տղայիս հետ: Չես փոշմանի:

Տանտիրուհի-աղջիկն արդեն բացել էր մուտքի դուռը.

-Ձեր տղային ջերմ կբարեւեք: Իմ սիրած տղայի անունից:

Տղամարդը մանր հազալով եւ գլուխն օրորելով՝ անշտապ իջավ աստիճաններով: Երկրորդ հարկի աստիճանահարթակին նա մտամոլոր բախվեց իրեն հանդիպակաց ելած բարձրահասակ մի տղամարդու, սակայն չարձագանքեց նրա կոպիտ

կշտամբանքին: Արդեն առաջին հարկում, շքամուտքից դուրս գալիս, լսեց հովազազգեստ աղջկա անզուսպ քրքիջը: Իրենից անկախ՝ տղամարդն էլ անձայն քրքջաց ու գոհության ժպիտը մազմզոտ դեմքին՝ մտավ փողոցի աղմուկի մեջ: